Upraviteljstvo

347.6
И-26.

347.6
Ա-26
347.6
Ա-26
Հիրատարակ
01. 2013
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1 MAR 2010

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

630
3-ԱԹ

ԵԳՈՐ ԱՒԱԳԵԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՍԻՆՈԴԻՆ

Թիֆլիզաբնակ վաճառական Եգոր Աւագեան Դաւթեանի ժառանգներ՝ գնդապետուհի Մարիամ Սուրէնեանից, Եկատերինա եւ Բարսեղ Դաւթեաններից

ԾԱՆՈՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

1906 թուականին վախճանուած մեր եղբայր Եգոր Աւագեան Դաւթեանը Թիֆլիզի Շրջանական Դատարանում հաստատուած իր կտակով պարտաւորեցրել է մեզ իր կարողութեան մի մասը յատկացնել բարեգործական նպատակով՝ ըստ մեր ժառանգներիս բարեհայեցողութեան։

Ի նկատի ունենալով, որ ներկայումս հայ գիւղական ազգաբնակութիւնը, շնորհիւ գիւղատնտեսական գիտութեանց բացակայութեան, գտնւում է ծայր աղքատութեան մէջ, և որ այդ ուղղութեամբ նրան տուած գիտութիւնը առհասարակ արժէք ունի մեր երկրի տնտեսական դրութեան բարձրացման համար, մենք՝ ժառանգներս որոշեցինք ի յիշատակ մեր հանգուցեալ եղբայր Եգոր Աւագեան Դաւթեանի հիմնել Անդրկովկասի հայաբնակ շրջաններից մէկում գիւղատնտեսական դպրոց։

Գիւղական հասարակութիւնների կողմից մեզ արուած բազմաթիւ դիմումներից մենք գերադասեցինք այդ նպատակի համար Ս. Էջմիածինը, որպէս հայաբնակ կենտրոն, շրջապատուած բազմաթիւ գիւղերով և ծխական դպրոցներով, մանաւանդ որ նա, ունենալով Գէորգեան Ճեմարանի նման մի կարևոր հաստատութիւն, մեր կարծիքով, ամենից համապատասխան վայրն է ներկայացնում մեր վերը յիշած նպատակների համար։

Ահա թէ ինչու մենք՝ հանգուցեալ Ե. Ա. Դաւթեանի ժառանգներս դիմում ենք Սրբազան Սինոդին իրագործելու մեր վերև յիշած նպատակը հետևեալ առաջարկներով և պայմաններով։

Առաջին։ Ապագայ Գիւղատնտեսական Դպրոցը համարելու է Գէորգեան Ճեմարանի Գիւղատնտեսական Բաժանմունք և կրելու է «Եգոր Աւագեան Դաւթեանի Գիւղատնտեսական Բաժանմունք» անունը։

Երկրորդ։ Այդ ճիւղի բացման և պահպանման համար առաջարկում և նուիրում ենք եօթանասունհինգ հազար ռուբլի՝ հինգ տոկոսաբեր օբլիգացիաներով, որպէս անձեռնմխելի գումար, որը պահելու է Ս. Էջմիածնի Սինոդում և որի տոկոսները գործադրելու են Գիւղատնտեսական Բաժանմունքի պահպանման վրայ։ Բացի այդ գումարից [illegible] շինութեանց, կահ կահաւորի, անհրաժեշտ կենդանի և [illegible] (գոյքի) համար, որպէս սկզբնական ծախք, յատկացնում [illegible] հազար ռուբլի։

35975 - 62

37.742

Երրորդ։ Գիւղատնտեսական Բաժանմունքը սկիզբ է դրելու Փորձնական Դաշտով, իր յատուկ տնտեսութեամբ և վարչութեամբ. նա գտնելու է Նորին Օծութիւն Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր հովանաւորութեան տակ և կառավարելու է մի յատուկ ծրագրով, որ կմշակենք մենք ժառանգներս Սրբազան Սինոդի, Գէորգեան Ճեմարանի վարչութեան, Կովկասեան Հայոց Բարեգործական և Թիֆլիզի Հայ Գիւղատնտեսական—Տնայնագործական Ընկերութեանց ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Չորրորդ։ Թէ ապագայ Բաժանմունքը և թէ սկզբի տարիներում հիմնուած Փորձադաշտը ունենալու է իր յատուկ նախահաշիւը՝ անկախ Ս. Էջմիածին տնտեսութեան նախահաշուից, որը սակայն ներկայացնում է Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի հաստատութիւն՝ ամեն տարի յունուարին։

Հինգերորդ։ Գիւղատնտեսական Բաժանմունքը և Փորձադաշտը կառավարելու է իր գումարի տոկոսներով, տնտեսութեան տուած եկամուտներով, աշակերտների թոշակներով, նուիրատուութիւններով ու նպաստներով, որ նա կստանայ մասնաւոր անձերից, հասարակական հիմնարկութիւններից և այլն։

Վեցերորդ. Գիւղատնտեսական Բաժանմունքը ունենալու է իր յատուկ կանոնադրութիւնը՝ յարմարեցրած Գէորգեան Ճեմարանի և մեր եկեղեցական ծխական դպրոցների ծրագրին այնպէս, որ մի օրգանական կապ ստեղծի առաջինների և վերջինների միջև։ Այդ կանոնադրութիւնը կմշակեն երրորդ կէտում յիշուած անձանց և հաստատութիւնների ներկայացուցիչները, որը և կներկայացնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին ի վերջնական հաստատութիւն։

Եւ ահա այդ հաստատութեան (Գիւղատնտեսական Բաժանմունքի և Փորձնական դաշտի) գոյութեան և հարատևութեան համար առաջարկում ենք Սրբազան Սինոդին յատկացնել Էջմիածնապատկան—նրա սահմաններում գտնուած յիսուն դեսեատին ջրաբեր յարմարազոյն մի հողաբաժին, որի ոռոգման համար Վաղարշապատ գիւղի հասարակութիւնը յատուկ արձանագրութեամբ և համախօսականով յատկացրել է իր իրաւանց տակ գտնուած ջրից երեք բաշ։ Միաժամանակ նոյն գիւղական հասարակութիւնը պարտաւորւում է մի վճռով հաստատել, որ նա երբէք ապագայում վէճ չէ առաջացնելու և յետ չէ պահանջելու ոչ տուած երեք բաշ ջրի և ոչ էլ յիսուն դեսեատին հողի համար ոչ Ս. Սինոդից և ոչ Գիւղատնտեսական Բաժանմունքից կամ նրա Փորձադաշտից։

Եթէ այս կամ այն աննախատեսելի պատճառով Գէորգեան Ճեմարանին կից Գիւղատնտեսական Բաժանմունքը կամ Փորձնական դաշտը դադարի գոյութիւն ունենալուց, այդ դէպքում անձեռնմխելի գումարը անցնում է կամ մի այլ՝ Անդրկովկասի հայաբնակ շրջանում գտնուած նոյնանման նպատակներ ունեցող հաստատութեան, կամ հայկական կուլտուրական մի ուրիշ ձեռնարկութեան—ըստ որոշման այն անձանց և հաստատութիւնների ներկայացուցիչների, որոնցից կազմուած է լինելու Գիւղատնտեսական Բաժանմունքի Տնտեսական Խորհուրդը, իսկ շարժական և անշարժ գոյքը մնում է Ս. Էջմիածնին, որպէս նրա սեփականութիւն։

Ժառանգներ Ե. Ա. Դաւթեանի՝
Եկատերինա Աւագեան Դաւթեան
Մարիամ Աւագեան Դաւթեան

Յունիսի 2-ին, 1911 թ.
Թիֆլիզ։

ԴԱՒԹԵԱՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՓՈՐՁԱԴԱՇՏ
ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(Նախագիծ)

Փորձադաշտի նպատակը։ Փորձադաշտ (опытное поле) կամ օրինակելի տնտեսութիւն (образцовое хозяйство) այն գիտական-գործնական գիւղատնտեսական հաստատութիւնն է, որը նպատակ ունի՝ մի կողմից ուսումնասիրել Վաղարշապատի ռայօնում (շրջանում) գոյութիւն ունեցող բնական-տնտեսական բոլոր պայմանները՝—ստեղծելու համար այդ շրջանին համապատասխանող լաւագոյն տնտեսութեան եղանակներ և ձևեր, իսկ միւս կողմից նա հնարաւորութիւն է տալու Փորձադաշտում պարբերաբար աշխատողներին ձեռք բերել նոյնանման տնտեսութիւններ կազմակերպելու հմտութիւն՝ համաձայն այն միջոցների, որ կունենան իրենց տրամադրութեան տակ աշխատաւորները իրենց գիւղում, կամ մի այլ տեղ՝ որը գտնւում է նման կլիմայական—հողային պայմաններում, ինչ և Փորձադաշտն է։

Սրանից երևում է, որ փորձադաշտը նեղ մտքով գիւղատնտեսական գործնական դպրոց է, որի աշակերտները կազմում են նրանում պարբերաբար աշխատողները (պրակտիկանտները)։

Ընդունելութիւնը Փորձադաշտում։ Փորձադաշտ ընդունելու են Գէորգեան Ճեմարանի սաները և պատանիներ՝ 15 տարեկանից, որոնք սակայն անցած կլինեն տարրական, քաղաքային ստորին, գոնէ երկդասեան դպրոցների դասընթացքը։

Աշխատանքները Փորձադաշտում սկսւում են առաւօտները վաղ՝ ժամ 4—5-ից և տևում են մինչև երեկոյ ժամ 6—7-ը՝ օրական 4—5 ժամ հանգրաւով։ Աշխատաւորները մասնակցելու և կատարելու են այն բոլոր աշխատանքները, որոնք անհրաժեշտ են Փորձադաշտի տնտեսութեան համար։

Փորձադաշտի աշխատանքները կատարւում են համաձայն նախապէս կազմուած տնտեսութեան պլանի՝ դեկավարութեամբ գիւղատնտեսութեան մէջ թէ տեսականապէս և թէ գործնականապէս հմուտ մասնագէտի, որը և փորձադաշտի պատասխանատու կառավարիչն է։

Փորձադաշտը ունենալու է այլ մասնագէտներ էլ, որոնք ապրելու են Փորձադաշտում և կատարելու են նրանց յանձնուած գործը։

Փորձադաշտի տնտեսութիւնը։ Դաւթեան Փորձադաշտը Էջմիածնում ըզբաղուելու և առաջ է տանելու այն կուլտուրաները, որոնք յատուկ են Անդրկովկասի տաք և ջրաբեր շրջաններին, հետևապէս այստեղ տնտեսութիւնը հիմնուելու է

Երկրագործութիւնից ա). Աշնանացան և գարնանացան հացաբոյսերի մշակութեան վրայ, բ) Բամբակի շարքացան և ամենարդիւնաւոր կուլտուրայի, գ) Իւղատուներների՝ կտաւատի, քնջութի, տիզկանի (գերչագ) և այլն դ) Արմատենիների՝ գետնախնձորի, գազարի, ճակնդեղի, ստեպղինի և այլն, ե) Կուլտուրական խոտաբոյսերի՝ առւոյտի, երեքնուկների, եղնուկի և դրանց խառնուրդների և զ) Այդ բոլոր կուլտուրական բոյսերից լաւագոյն սերմերը բուծանելու, և դրանց տարածելու գործի վրայ։

Այդ բույսերի մշակութեան հետ միաժամանակ փորձեր են անելու՝ պրոդափոխութեան, հերկի զանազան եղանակների, գոմաղպի և արհեստական պարարտանիւթերի գործադրութեան և դրանց բույսերի ու հողի վրայ ունեցած ազդեցութեան, վարերի տարբեր խորութեան, գութանների և ցաքաններից զանազան տեսակների, երկրագործական այլ գործիքների և մեքենաների կիրառութեան, միջնակների մշակութեան ազդեցութեան և հողի և այլ խոնաւութեան տնտեսութեան և այլ փորձերի վրայ։

բ) *Պտղաբուծութիւն եւ պարտիզպանութիւն։* Հողին և կլիմային համապատասխան տարբեր պտղատու ծառերի ընտրութիւնը, այգու հողի մշակութիւնը—պլանտաժ, կիսապլանտաժ, պատուաստների զանազան տեսակներն ու եղանակները։ Այգու և պտղատու պարտէզների խնամքը՝ զարգացման բոլոր շրջաններում։ Կռիւ վնասատուների դէմ. բժշկութիւն տնկային և այլ հիւանդութիւնների։

գ) *Տնկարան*—տնկարանի նախապատրաստութիւնը, սերմերն ու խնամքը առաջին երկու տարում։

դ) *Վազաբուծութիւն։* Խաղողի օրինակելի այգի—գինու և դեսերտի տեսակ խաղողներով։ Դրանց մշակութիւնը և պահպանելը։

ե) *Մրգաբուծութիւն*—Մրգեր խնամելը, պահելը, դրանցից կոնսերվներ պատրաստելն ու դրանց չորացնելը զանազան սիստեմի մեքենաներով, վառարաններով և մրգերից արդիւնագործական ապրանք շինելը։

զ) *Շերամապահութիւն*—Տնկարան, շերամատուն, որդի կերակրելը, շերամի խնամքը և նրանից սերմ ստանալը։

է) *Մեղաբուծութիւն։*—10 փեթակ՝ ցուցական փեթակներով և մեղաբուծական ողջ ընթացքով ու մեղուների հիւանդութիւնների բժշկումը։

ը) *Անասնապահութիւն։* Լծկան եղների և ձիերի խնամքը—դրանց կանոնաւոր գործադրութիւնը տնտեսութեան մէջ։

թ) *Կաթնատնտեսութիւն։* Կովերի ընտրութիւնը, խնամքն ու կերակրելը (կերակրի նորմաներ). կաթ և նրանից կաթնային մթերքներ պատրաստելը (իւղ, պանիրներ, սեր, տվօրոգ, և այլն)։

ժ) *Բանջարաբուծութիւն։* Վաղահաս բանջարներ և մրգեր բուծանելու եղանակը՝ ջերմոցում, սառ ջերմոցում և բաց տեղերում. խնամք և բժշկութիւն։

Փորձնական դաշտում գործնական աշխատանքները սկսելու են մարտի սկզբից և տևելու մինչև նոյեմբերի վերջը։

Տեսական զիտութիւն։ Տեսական գիտութիւնները՝ հիմնուած նախորդ ամիսների գործնական պարապմունքների փորձերի և հետևանքների վրայ—իրանց բացատրութիւնը և հիմնաւորումը ստանալու են ձմեռային ամիսներում՝ դեկտեմբերից մինչև մարտ, որ կատարելու է յատուկ ժամերին Փորձադաշտի լաբորատորիայում։

Զրոյցներ հատակատորների համար։ Բացի դա տեղի են ունենալու գիւղատնտեսական յատուկ զրոյցներ և դասախօսութիւններ, որոնց կարող են ներկայ լինել հասակաւոր, կիսագրագէտ և նոյն իսկ անգրագէտ գիւղացիներ։

Ապրուստի եւ այլ պայմաններ։ Փորձնական պարապմունքներին պարբերաբար մասնակցողները վարձ չեն վճարում. նրանք ապրելու և կերակրելու են իրենց հաշուով—գիւղում (Վաղարշապատում) կամ Փորձադաշտում որոշ պայմաններով և վճարով։

Աշակերտների թիւը։ Փորձնական դաշտը կարող է ընդունել պարբերաբար աշխատաւորներ (պրակտիկանտներ) 25—30 հոգի։

Տեւողութիւն եւ վկայական։ Դասընթացքները—գործնական պարապմունքների հետ Փորձադաշտում տևելու են երկուսից—երեք տարի։

Լրիւ դասընթացքներ աւարտողները և գործնական պարապմունքներին երկու տարի մասնակցողները ստանում են վկայական Փորձադաշտի Տնտեսական Խորհուրդից՝ անդամների ստորագրութեամբ։

Փորձադաշտի նիւթական միջոցները։

Փորձադաշտը պահելու է ա) Դաւթեան ժառանգների նուիրած գումարի տոկոսներով, բ) տնտեսութեան եկամուտներով, գ) աշակերտների թոշակով և դ) Փորձադաշտին արուած յատուկ նուիրաբերութիւններով—սակայն նա համարելով Ս. Էջմիածնի տնտեսութեան օժանդակ հաստատութիւն, կառավարելու է իր յատուկ Տնտեսական Խորհուրդով, որի անդամները հաստատում են Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի կողմից։

Տնտեսական Խորհուրդ։ Դաւթեան Գիւղատնտեսական Բաժանմունքի և Փորձադաշտի Տնտեսական մասը կառավարում է Տնտեսական Խորհուրդը, որը կազմուած է լինելու ա) Ամենայն Հայոց Կաթողիկոսի մի ներկայացուցչից, բ) Դաւթեան ժառանգների մի ներկայացուցչից, գ) Բաժանմունքի կառավարչից դ) Գէորգեան Ճեմարանի տեսչից, ե) Վաղարշապատի հասարակութեան մի ներկայացուցչից (ընտրուած երեք տարով), զ) Վաղարշապատի Հայոց Բարեգործական Ընկերութեան մի ներկայացուցչից և է) Թիֆլիզի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործ. Ընկերութեան Վաղարշապատի ճիւղի մի ներկայացուցչից—(եթէ այդպիսի ճիւղ երբ և իցէ բացուի Վաղարշապատում)։ Տնտեսական Խորհուրդին նախագահելու է Բաժանմունքի կառավարիչը, որը և պաշտօնական ներկայացուցիչն է այդ հաստատութեան թէ Սինոդի և թէ այլ օրինական մարմինների առաջ*)։

Նախահաշիւ եւ տնտեսական պլան։ Տնտեսական Խորհուրդը իւրաքանչիւր տարի կազմում է Գիւղատնտեսական Բաժանմունքի (կամ Փորձադաշտի) նախահաշիւն ու տնտեսական պլանը, որոնք ներկայացուում են Թիֆլիզի Հայ Գիւղատնտեսական Ընկերութեան Վարչութեան քննութեանը. սա, անելով իր նկատողութիւնները՝ գործի նպատակայարմար կազմակերպութեան մասին, վերադարձնում է այն Տնտեսական Խորհրդին՝ ի գործադրութիւն։

---

*) Գիւղատնտեսական Բաժանմունքի կառավարիչը առաջին տարում նշանակուում է Դաւթեան ժառանգների կողմից, իսկ այնուհետև՝ ընտրուում է Տնտեսական Խորհրդի կողմից և հաստատուում Դաւթեան ժառանգներից։ *Ծանօթ.*

ՆԱԽԱՀԱՇԻՒ

ԴԱՒԹԵԱՆ ՓՈՐՁԱԳԱՇՏԻ, Ա. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Ա. ԱՆՇԱՐԺ ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՄԱՍԵՐ

I Ցանկապատ։

1) Ցանկապատ և տոու 50 դես. հողաբաժնի շուրջը – 1400 սաժ. (2—1½—1 արշ.) a՝ 10 կոպ. . . . . = 140 բուբ.
2) Երկաթէ կոնատներով 5 շարք ցանկապատելու երկաթ — 150 փութ a՝ 2 բուբլի . . . . . = 300 «
3) Փայտի ցցեր 700 հատ a՝ 20 կոպ. . . . . = 140 «
4) Դրանց տեղերը գնելը և անցկացնելն ու ամրացնելը սաժէնը 10կ. = 140 «
5) « ներկելը—a՝ 10 կոպ. . . . . = 70 «

Ցանկապատ՝ ամբողջ 50 դեսեատինի համար **790 բուբ.**

II Տնտեսական շինութիւններ։

1) Մի կորպուս, քարաշէն, միահարկ. երկարութիւն 12 սաժ. լայն. 6½ սաժ. բաղկացած՝ 6 սենեակից, մի լաստանից, երկու նախասենեկից և 1 խոհանոցից . . . . . 6500 բուբ.
2) Մի սարայ՝ մեքենաների և գործիքների համար—երկար. 15 սաժ. լայն 3 սաժ. . . . . 1800 «
3) Մի գոմ քարաշէն՝ երկարութիւն 12 սաժ. լայնութիւն 3 սաժ. 8 ձիերի, 8 եզների և 6 կովերի ու դրանց հորթերի համար 2000 «
4) Մի նկուղ—ամբար գիւղատնտես. մթերքների, սերմերի համար 1500 «
5) Թռչնատուն. 18 արշ. և 6 արշ. . . . . 700 «

Շինութիւնների ծախք **12,500 բուբ.**

III Ագրեւոյթաբանական կայարան։

1) Շինութիւնը . . . . . 100 բուբ.
2) Մեքենաներ և գործիքներ . . . . . 140 «

Օդերեւոյթաբանական կայարան **240 բուբ.**

IV Կուլտուրաների համար միանւագ ծախք։

1) Պողատու պարտէզ՝ 2 դեսեատին—պլանտաժ . . . . . 200 բուբ.
2) 600 պողատու ծառեր և տնկիներ a՝ 40 կոպ. . . . . 240 «
3) Դրանց տնկելը a՝ 10 կոպ. . . . . 60 «
4) Դրանց ցիցեր և կապեր a՝ 6 կոպ. . . . . 36 «

Կուլտուրաների համար **536 բուբ.**

V Պտղատու ծառերի տնկարան։

1) Պլանտաժ 1 դեսեատ. և 10,000 տնկիներ (սերմելը) . . . . 200 բուբ.

Տնկարան **200 բուբ.**

VI Ցուցական բանջարանոց։

1) Երկու դեսեատին փորելը և մշակելը . . . . . 60 բուբ.
2) Մարդեր կապելը . . . . . 30 «
3) Սերմեր և սերմելը . . . . . 100 «
4) 10 ջերմոց (парникъ) 5 շրջանականոց a՝ 35 բուբլի . . . . 350 «

Բանջարանոց **540 բուբ.**

VII Ցատակագծումն (планировка)։

1) Ցատակագծումն՝ 50 դեսեատինի և ճանապարհներ շինելը . . 225 բուբ.
2) Առուներ հանելը . . . . . 100 «
3) Առուների շուրջ տնկիներ դցելը (10,000 հատ) . . . . . 250 «

Պլանիրովկա եւ առուներ տնկիներով **575 բուբ.**

Բ. ՇԱՐԺԱԿԱՆ

VIII Գործիքներ, կահ կարասիք եւ այլն։

1) Բնակարանի կարասիք (սեղաններ, աթոռներ և տան այլ իրեր) . . . . . 800 բուբ.
2) Լաբօրատօրիայի և մուզէյի գործիքներ . . . . . 350 «
3) Գուլթաններ՝ միախոփ, երկխոփ 5 հատ a՝ 46 ր. . . . . 230 «
4) Ցաքաններ, պլանէտ, մարկեօրներ, շարքացաններ և այլն . . 380 «
5) Այգեգործական գործիքներ՝ նասոս, բժշկութեան գործիքներ, բահեր, բրիչներ, սեկատորներ, սղոցներ, թոխիներ և այլն . . 260 «
6) Քամհար (вѣялка), մաքրիչներ (сортировка) . . . . . 280 «
7) Բրեզէնտներ, երկաթէ երկմատանի, եռամատանիներ, տաշկաներ, վեդրօներ, կշեռք և գոմի համար իրեր՝ օղեր, մաղեր, վեդրօներ, շղթաներ և այն . . . . . 370 «
8) Ֆուրգոն, պավօզկա՝ երկու հատ a՝ 120 ր. . . . . 280 «
9) Գոմերի ներքին սարքը . . . . . 400 «
10) Կաթնատնտեսական իրեր . . . . . 220 «
11) Գրադարան փորձադաշտի (մասնագիտական) . . . . 350 «

3920 բուբ.

X Կենդանի ինվենտար։

1) 6 հատ աշխատաւոր ձիեր a՝ 100 բուբլի . . . . . 600 բուբ.
2) 8 « աշխատաւոր եզներ a՝ 80 « . . . . . 640 «
3) 6 « կաթնատու կովեր a՝ 110 « . . . . . 660 «
4) 1 « ցուլ . . . . . 200 «
5) Թռչուններ՝ 10 ընտանիք . . . . . 300 «
6) Աշխատաւոր ձիերի լուծի սարք, նոյնը և եզների . . . . 220 «

Կենդանի ինվենտար **2620 բուբ.**

ԾԱԽՔ ԸՍՏ ԳՈԴԻԱԾՆԵՐԻ

ա) Անշարժ.

I) Ցանկապատ . . . . . 790 բուբ.
II) Շինութիւններ . . . . . 12,500 «
III) Օդերեւոյթաբանական կայարան . . . . . 240 «

IV) Կուլտուրաների համար	536	«
V) Պաղատու ծառերի Տնկարան	200	«
VI) Բանջարանոց	540	«
VII) Պանիրովկա, առուներ և դրանց ծառազարդելը	575	«
Ընդամենը անշարժ	15,381	բուբ.

բ) Շարժական

8) Կահ կարասիք. գիւղատնտեսական գործիքներ ու մեքենաներ	3920	«
9) Կենդանի ինվենտար (51 հատ)	2620	«
10) Աննախատեսելի ծախքեր	385	«
Ընդամենը շարժական	6,945	բուբ.

1) ԱՆՇԱՐԺ	15381	բուբ.
2) ՇԱՐԺԱԿԱՆ	6540	«
3) ԱՆՆԱԽԱՏԵՍԵԼԻ	79	«
Ընդամենը	22,000	բուբ.

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ (ադմինիստրացիա)

1) Կառավարիչ փորձադաշտի (ագրոնոմ) տարեկան	1800	բուբ.
2) Սրա օգնական լաբորանտ այգեգործ. «	600 – 700	«
3) 6 տարեկան մշակներ a՝ 180 բուբլի « . . .	1080 « 1200	«
4) Դրանց ուտեստը	520	«
Տարեկան	4000—4220	բուբ.

ՄԻՋՈՑՆԵՐ

1) 75,000 բուբլու 5%՝ տարեկան	3500	բուբ.
2) Գիւղատնտեսական Փորձադաշտի տնտեսութիւնից (50 դես., որից կուլտուրաների տակ՝ 30 դես.)	3000—4000	«
Ընդամենը	6500—7500	բուբ.

ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՔ

1) Ադմինիստրացիա և տարեկան մշակների	4000—4220	բուբ.
1) Տնտեսութեան ծախք՝ անասունների կերը, փորձեր, վարձանք, սերմ, հունձ և պահպանման համար	4000—3500	բուբ.
Տարեկան ծախք ընդամենը	8000—8720*)	բուբ.

Կազմեց՝ գիւղատնտես՝ } Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Թիֆլիզ, 28-ին յունիսի, 1911 թ.

Քննութեան առան և իրանց հաւանութիւնը տուեցին } տ. Մարիամ Սուրէնեան, օր. Եկ. Դաւթեան, Յարութիւնեան Ս., Սուրէնեան Ալ., Քալանթար Ալ.

*) Պակաս գումարը մօտ 1500—2000 բուբլի տարեկան՝ երկու տարուայ ընթացքում հոգում են Դաւթեան ժառանգները, մինչև որ ինքը տնտեսութիւնը ծածկի իր ծախքը՝ Ծ. Կ.

Հանրային գրադարան Պոլիտեխնիկական Ինստիտուտ
Պոլիտեխնիկական Գրադարան
Ազգային գրադարան NL0215270

37. 792